



ԱՄՀ-ն աշխատակազմի մակարդակով համաձայնեցրել է Հայաստանի Ստենդ-բայ ծրագրի երրորդ հերթական ստուգումը

Առաքելության ավարտին կազմվող մամլո հաղորդագրություններում զետեղված են ԱՄՀ-ի աշխատակազմի թիմերի հայտարարությունները պետություն կատարված այցելության նախնական արդյունքների մասին: Այս հայտարարության մեջ արտահայտված տեսակետների հեղինակն ԱՄՀ-ի աշխատակազմն է, և դրանք կարող են չհամընկնել ԱՄՀ-ի գործադիր խորհրդի տեսակետների հետ: Առաքելության այս այցելության արդյունքում Խորհրդի քննարկում տեղի չի ունենալու:

- ԱՄՀ-ի թիմն աշխատակազմի մակարդակով Հայաստանի իշխանությունների հետ համաձայնեցրել է ԱՄՀ-ի Ստենդ-բայ մեխանիզմով աջակցվող ծրագրի շրջանակում իրականացվող երրորդ հերթական ստուգման ամփոփումը: Երբ ամփոփումն հաստատվի ԱՄՀ-ի գործադիր խորհրդի կողմից, Խորհրդի նիստից հետո պետության բյուջեին աջակցելու նպատակով հասանելի կդառնա 25.714 միլիոն ՓՀԻ-ն/SDR-ը (մոտ 36.7 միլիոն ԱՄՆ դոլար):
- ԿՈՎԻԴ-19-ի համավարակը և վերջին շրջանի մարտական գործողությունները ազդել են երկրի տնտեսության մոտ ապագայի հեռանկարի վրա: ԱՄՀ-ի այս ֆինանսավորումը կօգնի իշխանություններին՝ հոգալու բժշկական և սոցիալ-տնտեսական հրատապ կարիքները և կաջակցի տնտեսական աճի ցուցանիշը բարձրացնող և աճն ավելի ներառական դարձնող բարեփոխումների իրագործմանը:

Վաշինգտոն, Կոլումբիայի շրջան, ԱՄՆ. Արժույթի միջազգային հիմնադրամի (ԱՄՀ) թիմը՝ Նեյթն Պորտերի գլխավորությամբ, քննարկումներ ծավալեց ԱՄՀ-ի Ստենդ-բայ մեխանիզմով աջակցվող Հայաստանի Հանրապետության բարեփոխումների ծրագրի երրորդ հերթական ստուգման առնչությամբ: Քննարկումները տեղի ունեցան 2020 թվականի սեպտեմբերի 2-ից մինչև նոյեմբերի 16-ն ընկած ժամանակահատվածում: Քննարկումների ավարտին պարոն Պորտերն արեց հետևյալ հայտարարությունը.

«Ուրախ ենք հայտարարել, որ ԱՄՀ-ի թիմն աշխատակազմի մակարդակով Հայաստանի իշխանությունների հետ համաձայնեցրել է իրականացված

երրորդ հերթական ստուգման ամփոփումը իշխանությունների տնտեսական բարեփոխումների ծրագրի առնչությամբ, որն աջակցվում է եռամյա Ստենդ-բայ մեխանիզմով: Ձեռք բերված համաձայնությունը ենթակա է հաստատման ԱՄՆ-ի գործադիր խորհրդի կողմից, որն այս ամփոփման հարցին անդրադառնալու է դեկտեմբերի կեսերին նշանակվելիք նիստի ընթացքում: Խորհրդի նիստից անմիջապես հետո 36.7 միլիոն ԱՄՆ դոլարը (25.714 միլիոն ՓՀԲ/SDR) հասանելի կդառնա փոխանցում կատարելու համար: Այս ֆինանսավորումը կտրամադրվի բյուջեին՝ օգնելու համար իշխանությունների այն ջանքերին, որոնք ուղղված են բժշկական և սոցիալ-տնտեսական հրատապ կարիքների բավարարմանը:

«Հայաստանի տնտեսությանը ծանր հարված են հասցրել ԿՈՎԻԴ-19-ի համավարակը և 1990-ականների սկզբից ի վեր տեղի ունեցած վատթարագույն մարտական գործողությունները: Ակնկալվում է, որ Հայաստանի տնտեսությունը 2020 թվականին կկրճատվի: Նշված շոկերը տարբեր առումներով խաթարել են ներքին պահանջարկը և առաջարկը, և դրանց հետևանքներն էլ ավելի են խորացել՝ արտահանումից և զբոսաշրջությունից ստացվող եկամուտների, դրամական փոխանցումների կտրուկ անկման, որոշ չափով նաև՝ կապիտալի գուտ ներհոսքի անկման պատճառով: Ակնկալվում է, որ իրական ՀՆԱ-ի անկումը 2020 թվականին կգերազանցի 7 տոկոսը: Վերականգնման մասով անորոշության մակարդակը բարձր է, և ակնկալվում է, որ տնտեսական աճի չափավոր տեմպը կպահպանվի 2021 թվականի ընթացքում, որից հետո այն կարագանա՝ երբ տնտեսությունն աստիճանաբար կհարմարվի նշված շոկերին և տնտեսության մեջ դրանց թողած հետքնանքներին, ապա նաև՝ կհաղթահարի դրանք: Միջնաժամկետ հատվածում գնաճը պիտի աստիճանաբար ավելանա և մոտենա թիրախին: Կարճաժամկետ հատվածում տնտեսական աճի նվազման ուղղությամբ ռիսկերը՝ կապված արտաքին զարգացումների, տնտեսական և քաղաքական միջավայրում առկա անորոշության, տարածաշրջանային լարվածության աճի և համավարակի ծանրության և սևագույնի հետ, հակակշռվում են հնարավոր այնպիսի դրական զարգացումներով, ինչպիսին կարող են լինել համավարակից հետո վերականգնման ավելի արագ տեմպը, տնտեսության մեջ համավարակի թողած հետևանքների նվազեցումը և բարեփոխումների սպասվածից ավելի արագ իրագործումը»:

«Մոտ ապագայում հիմնական գերակայություններից է լինելու հասարակության ամենախոցելի խմբերին աջակցության ցուցաբերումը՝ միևնույն ժամանակ ապահովելով ԿՈՎԻԴ-19-ի երկրորդ ալիքին հանրային առողջապահության համակարգի համարժեք արձագանքը: Երբ

վերականգնումը թափ հավաքի, հույժ կարևոր կլինի աստիճանաբար դադարեցնել ժամանակավոր աջակցության մնացյալ միջոցառումները»:

«Ավելի ցածր պետական եկամուտների, ինչպես նաև առողջապահության ոլորտի, սոցիալ-տնտեսական աջակցության ծրագրերի և անվտանգության ոլորտի վրա կատարվող ավելի բարձր ծախսերի պարագայում՝ 2020 թվականին էապես կաճեն բյուջեի դեֆիցիտը և պետական պարտքը: Ակնկալվում է, որ 2020 թվականին բյուջեի դեֆիցիտը կմեծանա՝ հասնելով 430 միլիարդ դրամի (ՀՆԱ-ի 7 տոկոսին), որից հետո միայն, հաջորդ տարի, կնվազի՝ հասնելով 355 միլիարդ դրամի (ՀՆԱ-ի 5½ տոկոսի): Բյուջեն ֆինանսավորվելու է՝ միջոցներ ներգրավելով ներքին և արտաքին աղբյուրներից, այդ թվում՝ զարգացմանն աջակցող գործընկեր կառույցներից: Անկալվում է, որ կառավարության պարտքը 2020 թվականին կգերազանցի ՀՆԱ-ի 60 տոկոսը, և կշարունակի աճել 2021 թվականին՝ հասնելով ՀՆԱ-ի մոտ 69 տոկոսի: ԱՄՆ-ի աշխատակազմը ողջունում է հարկաբյուջետային կայունությունն ապահովելու՝ իշխանությունների միանշանակ վճռականությունը, որն ուղղորդվում է իշխանությունների ֆիսկալ կանոնով, չնայած նրանց առջև ծառայած ճնշումներին: Այս առումով՝ իշխանությունները լրացուցիչ թափ են հաղորդելու պետական եկամուտների հավաքագրման ջանքերին՝ ձեռնարկելով հարկային քաղաքականության և վարչարարության միջոցառումներ, միևնույն ժամանակ զսպելով ընթացիկ ծախսերը և երաշխավորելով առաջնահերթ ծախսերը: Արդյունքում՝ սպասվում է, որ կենտրոնական կառավարության պարտքն աստիճանաբար կնվազի միջնաժամկետ հատվածում՝ 2026 թվականին դառնալով ՀՆԱ-ի 60 տոկոսից պակաս»:

«Դրամավարկային քաղաքականության ներկայիս խթանող ուղղությունը ճիշտ է ընտրված և օգնում է բավարար իրացվելիությունն ապահովել բանկային համակարգում և նպաստել ներքին վարկավորմանը: Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը (ՀՀ ԿԲ) պետք է ուշի-ուշով հետևի զարգացումներին և պատրաստ լինի ըստ անհրաժեշտության ճշգրտելու դրամավարկային քաղաքականությունը՝ միևնույն ժամանակ թույլ տալով, որպեսզի փոխարժեքը ծառայի որպես շուկր կլանող գործոն: Ֆինանսական համակարգում լարվածության որևէ նշաններ տեսանելի չեն, սակայն երկու շուկերի ողջ ազդեցությունը դեռևս ակնհայտ չի դարձել: Կարգավորման և վերահսկողության դաշտում ՀՀ ԿԲ-ի արձագանքը շուկերին հավուր պատշաճի հավասակշռել է ֆինանսական կայունության պահպանման, բանկային համակարգի ամրության պահպանման և տնտեսական ակտիվության պահպանման նպատակները: ՀՀ ԿԲ-ն պետք է շարունակի խոցելիությունների հայտնաբերումը և ձեռնարկի անհրաժեշտ քայլեր»:

«Չնայած հետաձգումներին, որոնք մասամբ պայմանավորված են եղել այս տարվա ընթացքում դրսևորված երկու շոկերի հետևանքներով, իշխանությունները շարունակել են առաջ ընթանալ տնտեսական բարեփոխումների իրենց օրակարգի իրագործման ուղղությամբ և հանձնառու են շարունակելու այդ ընթացքը: Բարեփոխումների գերակայություններից են, ի թիվս այլոց, պետական ներդրումների գործընթացն ավելի կուռ և արդյունավետ դարձնելը, հարկաբյուջետային ուղիների կառավարման բարելավումը, հարկաբյուջետային կառավարման և թափանցիկության կատարելագործումը, հարկային համակարգի արդյունավետության և արդարության մակարդակի բարձրացումը՝ կարգապահությունը խթանելու և պետական եկամուտների հավաքագրումն ավելացնելու նպատակով, ինչպես նաև կրթության ոլորտի կատարելագործումը և կոռուպցիայի դեմ պայքարի խստացումը.